

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեններ և տպածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

633.2  
Q-15

ՅԵՂԱԶԱՐՅԱՆ

ԽՈՏԻՀԱՎԱՔԵԼ  
ՉՈՐՍՑԵԼՆ ՈՒ ՊԱՀԵԼ

---

ՊԵՏԱԿԱՆ

1931

ՅԵՐԵՎԱՆ

18839

13.06.2013

4339.

2-15

四

Հ. Ա. Խ. Հ. ՀՕԴ. ԺՈՂՈՎՐԴՅԱՆ

ԳՅՈՒՂԵՏՆԱՑԵԱԿԵՐՆ ՀԱՆՐԱՊԵՏԱՆԵԼԻ ԳՐԸԴԱՐԱՆ

№ 28 (119)

24 SEP 2010

ՏԵ. ՂԱԶԱՐՅԱՆ

ԽՍԵՀԱՎԱՔԵԼԸ  
ԶՈՐԱՑՆԵԼՆ ՈՒ ՊԱՀԵԼԸ

Q H S I C U S 1981 6 b f b q. u. v



15480 - 57

Պետերասի տպարան  
Գրառեպ. № 6200  
Թուա. № 1998  
Հր. № 1588  
Տիր. 5000

### ՆԵՐԱԾԱՌԻԹՅՈՒՆ

Մեզ մոտ ձմեռվա ընթացքում անասունների հյամական կերը հանդիսանում է ղլխավորապես բնական խոտհարքներից ստացված խոտը, վորը չափազանց անկանոն հավաքելու ու պահելու հետեանքով՝ մննդառության տեսակետից ներկայացնում է շատ քիչ արժեք և դրա հետևանքով յերբեմն ձմեռվա ընթացքում չի բավարարում, և ստիպված ենք լինում անասուններին թողնել չոր գարմանի վրա, այդ պատճառով նրանցից չենք ստանում այն ոգուտը, ինչ վոր կարելի յեր ստանալ:

Խոտը ժամանակին հնձելուց, լավ չորացնելուց և լավ ել պահելուց մննդանքութերի կորուստը լինում է քիչ, և արժեքն ել կրկնապատկ-

վում ե, վորի հետևանքով քանակապես քիչ կերից կարող ենք ստանալ շատ մեծ եֆեկտ:

Մեր անասնապահության գարգացումը պահանջում է ունենալ լավ կերի բազա. այդ պըսլեմը լուծելու համար մեծ նշանակություն ունեն նաև ներկա բրոշյուրում շոշափվող լինդիբները, վորոնք առաջիկա գարնանը տարվելիք զյուղատնտեսական կամպանիալի աշխատանքների ընթացքում պետք ե ձեռնարկվեն առաջին հերթին մեր անասնապահական սովորողների ու կոլխոզների կողմից:

## I. ԻՆՉԻ՞Ց Ե ԿԱԽՎԱԾ ԽՈՏԻ ՔԱՆԱԿՆ ՈՒ ՎՈՐԱԿԸ ՅԵՎ ՅԵՐԴ ՊԵՏՔ Ե ՀՆՁԵԼ

Մեր նպատակն ե, վորքան կարելի յե մեր բնական և ցանովի խոտհարքներից ստանալ շատ ու վորակով ել բարձր տեսակի խոտ: Այդ նպատակին համելու համար մեզ անհրաժեշտ ե, վոր իմանանք, թե ամառվա վոր ժամանակին կամ թե չե՝ բույսերի կյանքի զարդացան վոր աստիճանում խոտն ստացվում ե շատ և բարձր վորակի, վորպեսզի հենց այդ շրջանում կատարենք խոտհունձը, վորը շատ մեծ նշանակություն ունի մեր անամնապահական տնտեսությունների համար: Շատ հաճախ պատահում ե, վոր մենք ուշ քաղելուց ստանում ենք շատ մեծ քանակությամբ խոտ, բայց մեծ մասամբ այդ խոտը լինում ե վորակով ցածր, այսինքն ան գըշխավոր նյութերը (սպիտակուց, ճարպ), վ բոնք կազմում են անասունների մննդի ամենակարեւ վոր մասերը, լինում են շատ քիչ քանակությամբ, իսկ զրա փոխարեն ավելանում են բույսերի հաստացած մասերը (բջջաթաղանթ և աղն),

վորոնք վորպես մնունդ շատ քիչ արժեք ունեն:

Այդպիսով մենի կարող ենի ասել, վոր ինչքան շատ ե լինում խոտի մեջ սպիտակուցը, այնիւն խոտը լինում ե վորակով լավը յեվ հակոռակը, վորտան բջջարտղանիքը շատ ե լինում խոտի մեջ, այնիւն խոտի վորակը լինում ե վաս:

Այդ նյութերի պարունակությունը կանաչ խոտի մեջ ամառվա լնթացքում շատ խիստ կերպով փոփոխվում ե: Բուլսերի մեջ յերիտասարդ ժամանակ կան մեծ քանակությամբ հիմնական սննդարար նյութեր - սպիտակուց, ճարտ և հակառակը՝ վոչ յերիտասարդ ժամանակ բուլսերի մեջ գերակշռում են անսննդարար նյութերը, փայտացած մասերը (բջջաթաղանթը): Այսեղից ել կարող ենի յեզրակացնել, վոր ինչքան շատ բաղենի խոտը, այնիւն վորակով կլինի լավը, քանի վոր սննդարար նյութերի գլխավոր մասը գտնվում ե բուլսերի տերևների և ծաղի ների մեջ, վորոնք ամառվա գերջում ալիս չեն լինում այնքան քանակությամբ, վորքան կային նրանք սկզբում կամ թեկուզ կիսին, այլ դրա փոխարեն ստաղվում են շատ մեծ քանակությամբ ցողուններ, վորոնց մեջ գերակշռում են բջջաթաղանթը և այլ վոչ-սննդարար նյութերը:

Բաղմաթիվ վորձերից և դիտողություններից հետո պարզվել ե, վոր խոտին մի իսկական ժամանակը ծաղկելուց միքանի որ շուտ կամ հենց ծաղկելու ըրջանն ե: Անա այդ ըրջանում ըստյսերը հասնում են այն զրության, վոր տալիս են առաստ բերք, և վոր զլխավորն ե, բույսերի մեջ բոլոր սննդարար նյութերը բաշխված են լինում հավասար չափով և վորը նպաստում ե լավ մարսողության: Այդ ժամանակ քաղված խոտը անասուններն ուտում են լավ ախորժակով, առանց վչացնելու ու առանց մնացորդի (կրծոնքի), իսկ ուշ քաղած խոտը, վորի ցողունները լինում են շատ կոշտացած կամ փայտացած՝ անասուններն ամբողջը չեն ուտում, այլ կիսից ավելին թողնում են, վորպես կրծոնք:

Խոտի հնձելու ժամանակը վորոշելիս պետք է նկատի ունենալ այն խոտաբույսերը, վորոնք գերակշռում են տվյալ մարգագետնում, ինարկե, յեթե դրանք ցանկալի — լավ խոտաբույսեր են, և արդեն հասունացած ժամանակ ալիս չպետք ե սպասել, վորպեսզի մյուսներն ել հասունանան, վորսվիետն նրանք շատ շուտ կրող են կոշտանալ և վորակն ել իջեցնել: Որինակ, առվույչը (յոնջան) պետք ե սկսել քաղել ծաղկելու առաջին ըրջանում, այն հաշվով, վոր յերբ ամբողջն արդեն ծաղկած լինի, քաղը վերջացնելիս լինենք:

Խորհուրդ ե արվում՝ յեթե ունենք լոնջայով  
զբաղեցրած շատ մեծ տարածություններ, քաղն  
սկսել այն ժամանակ, յերբ ծաղկել ե նրա <sup>1/10</sup>  
մասը (տասից մեկը), իսկ յեթե քիչ ե, այն ժա-  
մանակ, յերբ արդեն ծաղկել ե <sup>1/5</sup> մասը (հին-  
գից մեկը): Յեթե ուշացնենք, տերևները կթափ-  
վեն, ցողունները կլոշտանան, մի խոսքով, մնան-  
դարար նութերի մեծ մասը կլորչի: Բացի արդ  
չենք կարողանա ստանալ միքանի հունձ, վորով-  
հետեւ ուշ քաղելու հետևանքով ապաս շատ դըժ-  
վարությամբ ենա նորից զարգանում: Կորնզանի,  
յեթե ծաղկելու հենց առաջին շրջանում չքա-  
ղենք, շատ խիստ կերպով կոշտանում ե, անտ-  
սուններն ախորժակով չեն ուտում ու մեծ մասն  
ել թրդնում են:

Տիմոֆեյվկան (սեզախոտը) ծաղկելուց հե-  
տո շատ արտգ կերպով փայտանում ե և վատ  
ե մարսվում, իսկ յեթե քաղենք մինչև ծաղկելը,  
նախ և առաջ՝ կարելի յե ստանալ յերկու քաղ և  
յերկորդ՝ դրանով կաթնատու անասուններին  
կերակրելու դեպքում, կաթի քանակը շատա-  
նում ե:

Կարմիր յերեխուկը—յեթե ցանկանում ենք  
ստանալ յերկու բերք, պետք ե առաջին անգամ  
քաղել ծաղկելուց մի շաբաթ առաջ, իսկ յեթե  
չենք ցանկանում ստանալ յերկու բերք, կարելի

յե քաղել ծաղկելու շրջանում: Դրանից ուշ  
չպետք ե քաղել, վորովհետեւ տեւեների մի մա-  
սը չորանալուց թափվում ե, իսկ մըուս մասն ել  
չորացնելու ժամանակ ջարդվում ու փշրվում ե:  
Վիկան այն սակավաթիվ բույսերիցն ե,  
վորը ծաղկելուց հետո նորից կուտակում ե սը-  
նընդարար նյութեր, և յեթե քաղենք պտղակա-  
լած ժամանակ, վորակը վատ չի լինի, բայց յեթե  
ուշ քաղես, յերկրորդ բերքը չես ստանա, ուստի  
լավ կլինի ծաղկելու շրջանում քաղել, վորպեսզի  
շատ խոտ ստանանք: Ինչպես տեսանից վերեվ  
բերված որինակներից, մեր գլխավոր կերաբույ-  
սերի մեծ մասի վօրակն իջնում ե, յեթե բաղը  
ոււցնում ենք, յեզ բացի այդ՝ հնարավորու-  
թյուն չենք ունենում միբանի հունձ կատարելու:


Բացի այն, վոր շուտ քաղելուց ստացվում  
ե լավ վորակի խոտ, դրանով մենք կատարում  
ենք նաև մի մեծ աշխատանք, վորը հսկայական  
նշանակություն ունի գյուղատնտեսության մեջ:  
Ինչպես զիտենք, թե կուլտուրական ցանքսերի մեջ  
(յորեն, դարի և այն) և թե մարզագետիննե-  
րում շատ լավ զարգանում են անցանկալի բույ-  
սերը (մոլախոտերը), վորոնք շատ մեծ վլաս են  
հասցնում: Հողից վերցնում են մնադարար նյու-  
թերի մեծ մասը և խեղդում կուլտուրական  
բույսերին: Դրանցից ազատվելու ամենահիմնա-

կան միջոցը շուտ քաղելն է, վորպեսզի դրանք չսե մակալեն և չտարածեն իրենց սերմերը նաև հետագա տար/ների համար: Շուտքաղելու դեպքում, քանի վոր նրանց մեծ մասը միամյա լի, վոշնչանում են, և մենք հաջող կերպով ազատվում ենք նրանցից, իսկ լեթե խոտհունձն ուշացնում ենք, նրանք վոչ միայն լավ պտղակալում են ու տարածում իրենց սերմերը, այլ նրանց ցողուններն այնքան կոպիտ ու ջրալի լինում, վոր քաղած խոտր շատ դժվարությամբ ե չորանում, և այդ չորանալու շրջանում բույսերի ամենասողակար մասերը (տերւները և ծաղիկները) թափփում են, խոտն ել, ինչքան լավ աեսակի լինի, իշխնում ե իր վորակը:

## II. ԻՆՉՈՎ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ԿԱՏԱՐԵԼ ԽՈՏՀՈՒՆՁԸ

Կանաչ խոտը կարելի լի քաղել 3 ձևով՝ ձեռքով (գերանդիով), խոտհունձ մերենալով՝ ձիու ուժի միջոցով և խոտհունձ մերենալով՝ տրակտորի ուժի միջոցով: Ամեն մի տնտեսություն պետք ե աշխատի ինչքան կարելի լի արագ կատարել հունձը, վորպեսզի յեղանակները չփոխվեն դեպի վատը և չդադարեցնեն աշխատանքները: Զեռքով (գերանդիով) քաղելն ամենադժվարն է, կատարվում է դանդաղ և շատ թանգ ե նստում: այս ձևով / մի

բանվոր որական 10 ժամ աշխատելով, կես հեկտար խոտհարք հազիվ թե կարողանա քաղել: Ներկայումս, մանավանդ սովորողներում ու կոլխոզներում, վերջ պետք ե տալ գերանդիով քաղելուն և անցնել, յեթե վոչ տրակտորի, զոնեձիու ուժի միջոցով՝ խոտհունձ մերենաներին: Զիու ուժի միջոցով աշխատող խոտհունձ մեքենան կարող ե որական 10 ժամ աշխատելով, քաղել 3—4 հեկտար խոտհարք, իսկ տրակտորով աշխատելիս՝ 10—12 հեկտար:



Նկ. № 1. Խոտհար մեքենա.

Բացի այս, վոր գերանդիով քաղելիս աշխատանքի արտադրողականությունը շատ ցածր է, նաև ունի նաև աչն բացասական կողմը, վոր

բուկսերը քաղելիս հավասար բարձրության վրա  
 չեն կտովում, սեկ տեղ ավելի բարձր ե կտրվում,  
 մյուս տեղ՝ ցածր, և այդ պատճառով հետազա-  
 յում հենց այդ տեղը բուկսերը հավասար կեր-  
 պով չեն աճում հետագա հնձերի համար: Անհա-  
 վասար կտրելու հետևանքով, յերբ, որինակ՝ մի  
 տեղում արդեն բուկսերի քաղելու ժամանակն է  
 լինում, մյուս տեղում դեռ նոր են սկսում ա-  
 ճել, իսկ մի լեռորդ սեղում հունիսի հասու-  
 նացել են ու սերմակալել և այն: Ահա այդ ժա-  
 մանակ շատ դժվար ե լինում փորոշել քաղելու  
 իսկ կան ժամանակը, և ստացված խոտն ել ան-  
 կասկած լինում ե փորակով վատր: Ինչպես տե-  
 սանք, մեքենայի միջոցով հունձը նախ՝ շատ ա-  
 րագ ե կատարվում, և յերկրորդ՝ խոտը լավ ե  
 հնձվում՝ հավասար բարձրության վրա և ավելի  
 շատ ցածրից, փորը հոկայական նշանակություն  
 ունի այն պատճառով, փոր ստանում ենք շատ  
 խոտ: Չորացնելու տեսակետից ել մեքենան ձեռն-  
 տու լե, քանի փոր մեքենայի միջոցով քաղած  
 խոտը շատ արագ ե չորանում, փորը, ինչպես  
 վերեռում տեսանք, յեղանակների փոփոխության  
 պատճառով մեծ նշանակություն ունի: Ուշեմն  
 պարզ ե, փոր մեքենայի միջոցով մի կողմից խոտ-  
 նածի աշխատանքները թեթևանում են, մյուս կող-  
 մից՝ բերքն ել բավական կարող ե ավելանալ.

այդ պատճառով պետք ե անցնել մեքենայի մի-  
 ջոցով քաղելուն: Այստեղ ևս պարզ լեռնում ե  
 կոլեկտիվ անտեսության առավելությունը, վո-  
 րովինետև անհատ, ցաք ու ցըիվ անտեսություն-  
 ները հսարապորություն չունեն իրենց միջոցնե-  
 րով ձեռք բերել այդպիսին և դժվար թե հսարա-  
 վոր լիներ լրիվ ոգտագործել, վորովինետև մեքե-  
 նան լավ արգլունք ե տալիս միայն խոշոր տըն-  
 տեսություններում, վորտեղ կան տասնյակ և  
 հարլուրավոր հեկտար խոտհարքներ:

### III. ԿԱՆԱԶ ԽՈՏԻ ՉՈՐԱՑՈՒՄԸ

Խոտի փորակը փորոշելու ժամանակ շատ  
 մեծ ուշադրություն ե դարձվում այն խնդրին,  
 թե ինչպես ե նա չորացը ած, վորովինետև անկա-  
 նոն չորացնելու ժամանակ խոտը կարող ե փչա-  
 նալ և իր արժեքը կորցնել թեկուղ նա լինի  
 լովը ու ժամանակին հավաքված:

Խոտի չորացնելու նպատակը և կարևորու-  
 թյունը նրանում ե, փոր դուրս բերենք (գոլոր-  
 շիացնենք) կանաչ խոտի մեջ յեղած ջրի մեծ  
 մասը, փորպեսզի խոտը յերկար ժամանակ դեղի  
 մեջ մնալով, չփթի և չկորցնի սննդարար նլու-  
 թերը:

Թարմ կանաչ խոտի մեջ ջուրը կաղմում ե

70—80<sup>0</sup>/<sub>0</sub> (հարյուրից 70—80 մաս). պետք է աշխատել, վորպեսզի չորացնելուց հետո նրամեջ մնա միայն 10—15<sup>0</sup>/<sub>0</sub> (հարյուրից 10—15 մաս), քանի վոր ձմեռվա համար պահելիք խոտի մեջ լեթե դրանից ավելի մնա ջուրը, կարող ե այդ խոտը փշացնել (փթեցնել): Դրանից պակաս ջուր լինելու գեղքում ել խոտը կարող ե փշանալ, այսինքն շատ չորացրած խոտերը կրցնում են մննդարար նյութերից մի վորոշ մասը: Բացի այս, վոր խոտերը նորմայից ավելի շատ կամ պակաս ջուր պարունակելու գեղքում կարող են կորցնել իրենց մննդարար նյութերից, մինեռն ժամանակ չորացնելիս ել նրանք կորցնում են բավականին քանակությամբ մննդարար նյութեր՝ նայած չորացնելու ձևերին և յեղանակներին: Որինակ՝ լեթե շատ ուժեղ արե ե և, մի որում հնարավոր ե լրիվ կերպով չորացնել, խոտի կորուսոր կարող ե շատ չնչին լինել իսկ լեթե արեց զուրու և գալիս ժամանակ առ ժամանակ և լրիվ չորացնելը տևում ե միքանի որ, այդ ժամանակ չոր սննդարար նյութերից խոտը կարող ե կորցնել մինչև 10<sup>0</sup>/0-ի չափ, իսկ լեթե պայմանները շատ ավելի անբարենպաստ են, պատահում ե, վոր խոտը կորցնում ե սննդարար նյութերի մինչև 40<sup>0</sup>/<sub>0</sub>:

Խոտի չորացնելու վրա ամենավատ ազդե-

ցությունն ունենում են անձրևները. մեծ մասամբ դրանց հետևանքով ե, վոր խոտի մեջ սկսում են զարգանալ մեծ քանակությամբ մանր որգանիղներ (բակտերիաներ, մնկեր), վորոնք սկսում են փտեցնել խոտը՝ դեռ չհավաքված վիճակում: Պետք ե ասել, վոր անձրևներից ավելի շատ վնասվում են այն խոտերը, վորոնք քիչ թե շատ արդեն չորացել ելին. ինչ վերաբերում ե նոր քաղած կանաչ խոտերին, նրանք վորոշ չափով ավելի դիմացկուն են, և լերպեմն նույնիսկ մեծ անձրևները դրանց վնաս չեն հասցնում և միայն շատ լերկար ժամանակ տևող անձրևներից կարող են վնասվել:

Լավ, պարզ լեզանակին չորացրած խոտն ստանում ե շատ անուշ համ ու հոտ, և անասունները մեծ ախորժակով են ուտում ալդ, իսկ անձրևոտ լեզանակին չորացրած խոտը վոչ միայն չի ունենում ալդ անուշ համն ու հոտը, այլև վորոշ գեղքերության վնասակար ե դառնում կենդանիների համար, առաջացնելով ստամոքսային հիվանդություններ:

Արագ կերպով չորացնելու վրա մեծ ազդեցություն ունեն նաև քամիները և ողի մեջ լեզած խոնավության չափը: Վորքան ողում քիչ ե խոնավությունը և ուժեղ են քամիները, այնքան ավելի շուտ կարող ե չորանալ խոտը, ա-

ուանց մեծ չափով սննդարար նյութեր կորցնելու: Խոտը չորացնել կարելի յէ տարբեր ձևերով, բայց բոլոր այդ ձևերը բաժանվում են յերկու հիմնական, խոշոր խմբերի, վորոնց հիմքը որվա յեղանակն ե: Յեթե յեղանակը պարզ ե և հարմար ե, չորացնելու համար կլինեն մի տեսակ ձևեր, իսկ յեթե յեղանակն անձրևային ե կամ ամպամած՝ չորացնելու համար կան այլ ձևեր:

### 1. ԻՆՉՊԵՍ ՉՈՐԱՑՆԵԼ ԽՈՏԸ ՉՈՐ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԻՆ


Ինչ ձեվով ել չորացնելիս լինենք խոտը, պետք ե աշխատել ինչքան կարելի յէ ֆիջ ըուռ տալ, վորովինեսվ շատ ըուռ տալուց ջարդվում, փերվուն են ու կորչում բայսերի նուրբ ու ամենասերնդարար նյութերը, մասերը—տերեվներն ու ծաղիկները:

Պարզ յեղանակներին խոտը չորացնելու մի քանի ձև կա, վորոնց կիրառելը կախված ե զանազան պատճառներից. մենք այստեղ կը նենք դրանդից մի քանիսը:

ա. Խոտը քաղելուց հետո, յերբ մի քիչ թառամում ե, վորում ենք բարակ շերտով մինչև չորանալը: Հաճախ մի քանի տնդամ շուռ ենք տալիս, վորպեսզի արագացնենք չորացման պրոցեսը,

ապա հավաքում փորբիկ կիտուկների, վորից հետո արդեն խոտը պատրաստ ե ձմեռվա համար, և կարելի յէ տեղափոխել տուն, կազմել դեղեր կամ տեղավորել հատուկ պահեստաներում Յեթե խոտը քաղիած ե հնձող մեքենայով, այդ դեպքում կարդիք չկա խոտը փոելու ավելի բարակ շերտի, այլ բավական ե մի յերկու անգում շուռ տալ և ապա հավաքել ու կիտուկներ կազմել: Այս յեղանակով չորացնելն ամենահեշտ, եժան և տարածվածն ե, բայց սրա վատ կողմն արն ե, վոր չորացնելը բավականին յերկար ժամանակ ե խլում, և այս ձեռվ խոտի չորացնելը մեծ մասամբ պետք ե կտտարել այնպիսի տեղերում, վորտեղ կլիման չորացնեն ե կամ թե չե՛ վորտեղ տարվա այդ շըջանում անձրևներ շատ քիչ են դալիս:

բ. Յեթե խոտը քաղված ե գերանդիով, թողնում ենք մի քիչ թառամելու և ապա փոռում բարակ շերտով (յեթե խոտը քաղված ե մեքենայով, կարեք չկա փոելու): Որքա մեջ մի քանի անգամ շուռ ենք տալիս և յերեկոյան, մինչև ցողի առաջանալը, հավաքում ենք վորբիկ ժամանակավոր կիտուկների, թողնելով այդպես մինչև հետևյալ տառափոր, վորովիետե ցողը կամ զիշերվա ընթացքում յեկած վորբիկ անձրևներն ավելի քիչ մնան կտան խոտին ժամանակավոր կիտուկներում, քան թե՝ յեթե թուներ կամ առաջանակ տառով փոված վիճա-



ՀՅՒՀ - ԾԾՀ

կում: Հետեւալ որը նորից փռում ենք և յերեկոլան  
նույն ձեռվ հավաքում: Յեթե խոտը չի չորացել  
այդ ժամանակամիջոցում, այդ նույն ձեռվ շարու-  
նակում ենք մի քանի որ, բայց հետզհետեւ ավելի  
մեծ կիտուկներ ենք կազմում: Այսպէս 3-4 որվա  
ընթացքում չորացնում ենք խոտը: Խոտը շուռ  
տալիս և հավաքելիս պետք ե զգույշ լինել վո-  
րովհետեւ կարող են տերեների և ծաղիկների մեծ  
մասը կոտրատվել և թափվել զետնի վրա:

Այս յեղանակով չորացնելը ձեռնառու յե միայն  
առ ժամանակ, յերբ խոտինձի շրջանում ժամա-  
նակ առ ժամանակ փոքրիկ անձրեներ են գալիս,  
իսկ ընդհանրապես սա այնքան ել լավ ձե չե,  
վորովհետեւ պահանջում ե չափազանց շատ բան-  
վորական ձեռքեր շուռ տալու և կիտուկների հա-  
վաքելու համար:

զ. Խոտը քաղելուց հետո փռում ենք, և յերբ  
մի քիչ արգեն չորանում ե, հավաքում, կազմում  
ենք փոքրիկ կիտուկներ ու թողնում, վոր մնա արդ-  
պես: Յերկու յերեք որից հետո միքանի փոքրիկ  
կիտուկները միացնում ենք իրար հետ և դարձ-  
նում մեծ կիտուկներ, վորից հետո նորից թող-  
նում ենք մի քանի որ: Յեթե ամբողջ ժամանա-  
կամիջոցում յեղանակները լավ եյին, այդ բոլորից  
հետո խոտը լրիվ չորացած պետք ե լինի, և կա-  
րելի յե տանել. իսկ յեթե մի քիչ անձրեներ են

լեկել, պետք ե տուն տանելու ժամանակ (յեթե  
արև կա) մի քանի ժամով բաց անել կիտուկները,  
ապա տանել դիգելու:

Այդպիսի ձեռվ խոտ չորացնելը շատ լավ ե, քանի  
վոր նման յեղանակով շատ քիչ տերեներ և մատ-  
զաշ ցողուններ կարող են ջարդվել ու կորչել և  
մլուս կողմից՝ շատ քիչ տերեներն են չափից դուրս  
չորանում, վորը նույնպես խոշոր նշանակություն  
ունի խոտի վորակի համար: Այս ձեռվ չորացնելն  
անքան ել շատ բանվորական ձեռքեր չե պահան-  
ջում, ստացված խոտը լինում ե շատ լավ վորակի,  
և անսառուններն ուտում են ախորժակով ու ամ-  
բողջովին:

## 2. Ի՞ՆՉՊԵՍ ԶՈՐԱՑՆԵԼ ԽՈՏԸ ԱՆՁՐԵՎԱՏ ՑԵՂԱՆԱԿՆԵՐԻՆ

Խոտը լավ չորացնելու ամենամեծ թշնամին  
անձրեններն են, մանավանդ յեթե յերկար են և ե-  
փում: Այդպիսի ժամանակ աշխատանքները գժվա-  
րանում են և անկասկած բերքի զգալի մասը կոր-  
չում ե: Խոնավության հետևանքով, ինչպես խմա-  
ցանք, առաջանում են բակտերիաներ և մնկեր,  
վորոնք սկսում են փոեցնել խոտը: Վորպեսզի  
այդ ժամանակ փակցումից աղատենք խոտը,  
ոկսում ենք ամելի շուտ շուտ շուտ տալ խոտը, վո-

ըից կրկին ունենում ենք շատ կորուստներ, այս սինըն՝ ջարդվում են, փշբվում բույսերի տերեներն ու ծաղիները: Ահա այսպիսի անձրեստ լեղանակների ժամանակ խոտը չորացնելու համար կան մի շարք ձեեր, վորոնց նպատակն ե ինչքան կարելի լե քիչ կորուստով լերկար ժամանակվաընթացքում չորացնել խոտը: Այդպիսիներից մի քանիսի մասին, վորոնք կարող են կիրառվել մեր պայմաններում, կիսունք ներքեւում:

ա. Այս ձևն ամենապարզն ե և հեշտը: Յեթե քաղելուց մի քիչ հետո սկսվում են անձրեները, պետք ե ամիշապես հավաքել քաղած ամբողջ խոտը փոքրիկ խուրձերի, այնպես, վոր քիչ թե շատ չորացուծ մասերը դասավորվեն դեպի ներս, իսկ ավելի թաց — թարմ մասերը՝ դեպի դուրս, վորովնետե ինչպես վերն խմացանք, անձրեներն ավելի շատ մնանաւմ են չորացած խոտերին, իսկ թարմ խոտերին՝ համեմատաբար ավելի քիչ: Խուրձերը պետք ե ունենան կոնի ձև (այսինքն՝ հիմքերը պետք ե լինեն լայն, իսկ վերի մասերը պետք ե վերջանան սուր ծալրերով), վորպեսզի անձրեի կաթիներն ըսկնելիս շնան խոտի վրա, այլ ինչպես տանիքներից՝ սողան դեպի ցած (նկ. № 2):

Այսպես թողնելով, նրանց մեջ շատ հեշտությամբ մտնում ե ողը և քամու միջոցով կամաց կամաց սկսում ե չորանալ ամբողջ խոտը:


**Յերբ յեղանակները** պարզվում են, խուրձերը պետք ե պառկեցնել և նրանց հիմքերն ուղղել դեպի արեգակը: Սա կը նպաստի արագ կերպով չորացնելուն: Դրանից հետո խոտն արդեն ամբողջովին չորացած պետք ե լինի և կարելի լե տանել դեղեր սարքելու կամ պահեստներում պահանջում համար: Յեթե չորացումը շատ լերկար ե տևում (10-20 որ), հարկավոր ե զոնե 5 որը մեկ անգամ խուրձերի տեղը փոխել, վորպեսզի չփափ խուրձերի հիմքերի մասը՝ ամբողջ ժամանակ խոնավ գետնին մնալու պատճառով: Բայցի այդ, խորձերի տեղը փոխելն այն նշանակությունն ունի, վոր լեթե լերկար ժամանակ մինուցն տեղումն ենք թողնում, խոտը տանելուց հետո խուրձերի տեղերում բուսականությունը լավ չի աճում հետագա հունձերի համար: Այս ձեռով չորացնեն անձրենու լեղանակներին շատ ձեռնատու յե մանավանդ կարմիր յերեքնուկի, առվու լոի և ուրիշ ընդեղեն բու լոերի խոտերի համար, վորովնետե այս դեպւում խոտերն իրենց մննդաբար նյութերից կորուստ են ունենում ամենաչնչին չափերով, և համարյա թե բոլորովին չեն փշրվում ու թափվում



Նկ. № 2.

բուլաերի նուրբ մասերը հողի մեջ։ Սրա բացասական կողմն այն ե, վորպահանջում ե շատ աշխատող ձեռքեր։


Բ. Խոտի չորացումը զանազան վիալտյա՝ հողի մեջ ամրացող հենարանների վրա (կոլերի, խաչածե սյուների, բուլգերի և վիալտյա ցանկապատերի վրա): Նկարների վրա պարզ է բերելում են բոլոր լեզանակների յությունը (տես. նկ. 4,



Նկ. № 3.

5 և 6): Այս ձեերով չորացնելու նպաստին և այնպիս անել, վորպեսզի չորացումը կատարվի զանդաղ, առանց կորստի թաղելուց հետո հավաքում են փոցխերով, ավելի լավ կլինի հավաքել մեծ փոցխերով, վորոնք աշխատում են ձիու ուժի միջոցով, վորպեսզի արագ կատարվի այդ աշխատանքը (տես. նկ. 3). ապա կագնում են փոքրիկ

խորովներ և գասավորում այդ հենարանների վրա այն հաշվով, վոր նրանց հիմքերը գետնից բարձր լինեն, իսկ այդ «գեղերին» պետք ե տալ կոնի ձեւ, հետո պատերը պետք ե հավասարեցնել՝ ուռուցքներ և փոսեր չինելու համար, վորպեսզի տեղացող անձը կաների կաթիլները չմնան խոտի վրա, այլ սողան դեսլի հիմքը և թափվեն գետին։ Այդ հենարանների վրա պետք ե աշխատել, վոր



Նկ. № 4. Կոլեր.

խոտը չդասավորենք շատ մեծ շերտերով Ընդհանրապես պետք ե հենարանների վրա լինի խոտը դասավորված մինչև 70-80 սմ. (մեկ արշինի չափ)։ յեթե խոտը շատ թաց ե և նրա ցողուններն ել շատ ջրալի լեն, լավ կլինի դրանից բարակ շեր-

տով դասավորել։ Այդպիս սարքված խոտերը վոչ  
մի ձեի շուռ տալու  
կամ տեղափոխելու  
կարիք չունեն, բացի  
նրանցից, վորոնք  
կանոնավոր կերպով  
չեն յեղել դասավոր-  
ված, քամու կամ ու-  
րիշ պարանեներից  
ծովել են կամ խոր-  
դութություններ  
առաջ բերել։


Նկ. № 5. Բուրգ։

ված ձեերն են, վորոնք շատ քիչ աշխատանք են  
պահանջում, և այդ ձեով չորացրած խոտն ել վո-  
րակով հետ չի մնում պարզ յեղանակներին ստաց-  
ված խոտից, և անասունները մեծ ախորժակով են  
ուտում։ Սովորողներն ու կորիոզները պետք ե  
պատրաստեն այդպիսի հարմարություններ՝ անձ-  
րեների ժամանակ խոտերը հավաքելու ու առանց  
մնասի չորացնելու համար։

#### IV. ԻՆՉՊԵՍ ՊԱՀԵԼ ԶՈՐԱՑՐԱԾ ԽՈՏԸ

Շատ մեծ ուշադրություն պետք ե դարձ-

նել խոտի պահելու վրա, այլապես նա կորցնում  
է իր ամբողջ արժեքը, ինչքան ել նա ժամանա-



Նկ. № 6. Փայտա ցանկապատ.

կին հավաքված լինի և լավ չորացրած։ Դրա հա-  
մար ամհրաժեշտ է, վոր չորացնելուց հետո  
վորքան կարելի յե շուտ տեղափոխել կամ դի-  
զել խոտը, ասպա թե վոչ կարող են անձրեներ  
դալ և խանգարել աշխատանքներին, միևնույն  
ժամանակ շատ մեծ վնաս հասցնելով խոտին։  
Ի՞նչպես ենք իմանում՝ խոտն արդեն չորացել ե,  
թե վոչ, վերցնում ենք մի փունջ խոտ և յեթե  
շոշափելիս խշաշոց ե հանում և միքիչ հուպ տա-  
լուց կոտրտվում է կամ ձեղքվում, ալդպիսի  
խոտն ուրեմն արդեն չորացել ե և կարելի յե  
տանել պահելու։

Առհասարակ մեզ մոտ՝ Հայաստանում խոտը  
պահվում է ձմեռը գյուղում, գետի ուր փոխա-  
գրվում է սալերով։ Աայլերի վրա բարձելիս

պետք ե կանոնավոր բարձել, վորպեսզի ճանապարհին խոտի վորոշ մասը չթափվի և բայց այդ գգույշ պետք ե դարսել, վորովհետեւ լեթե առփայտի կամ կորնգանի խոտ ե, կարող են ջարդվել նրա տերեները և թափվել ճանապարհին։ Դաշտից աեղապիտիելիս, յեթե խոտը շատ ե և միքանի անդամ հետ պետք ե զալ, չպետք ե սայլը միշտ մինուույն ճանապարհով քշել, վորովհետեւ նախ՝ կարող ե ացդոել լեզած բուսականությունը փշանալ, յերկրորդն ել՝ փոսեր են զոյանում սալերի անցած տեղերում, լճանում են, և սկսում ե զարգանալ թթու թունավոր բուսականությունն, վորը կենդանիները չեն ուտում, և դրանք սկսում են վորպես մոլախոտեր՝ միաս տալ նաև մյուս տեղերի լավ բուսականությանը։

Դեղերի մեջ դասավորված խոտը, յեթե նույնիսկ շատ քիչ խոնավություն ունի, կարող ե փշանալ. դրա համար անհրաժեշտ ե դասավորելիս մի լավ ստուգել, և լեթե խոտը դեռ վորոշ չափով թաց ե, սպասել մինչեւ այն ժամանակ, յերբ կկարողանանք բոլորովին չորացնել. միայն դրանից հետո կարելի յե դիզել։

Արել մայր մանելուց հետո յերեք չի կարելի բաց ողի տակ դեղեր սարքել, վորովհետեւ այդ ժամանակ արդես առողջ ե զալիս ցողը (խոնավություն), վորի մեջ լավագույն կերպով զարգանում են բակտերիաներն ու սունկերը, վո-

րոնք հետագայում սկսում են քայլայել խոտը։ Բաց ողում դեղերը սարքելիս շատ լավ պետք ե դասավորել, ապա թե վոչ՝ կարող են ջրի կաթիները ներս մանել և վսասել։ Դեղերը սարքելիս պետք ե ընտրել այնպիսի տեղ, վորտեղ հողը բիչ խոնավությունն ե պարունակում (ավելի չոր տեղը), քանի վոր խոնավ տեղ դասավորելուց հետո խոտն սկսում է հողից խոնավությունը ծծել, և կարող ե սկսվել խոտի փտումը։ Ինչպիսի տեղ ել դեղը սարքելիս լինենք՝ պետք ե նրա տակ լցնել վորոշ քանակությամբ։ չոր նութեր (հին խոտ կամ դարման, տախտակի կտորներ, չորացած ծառերի ճյուղեր և այլն), կամ նրանց տակը պատրաստել հատուկ տախտակա հատակներ։

Դեղի արտաքին մասում պետք ե դասավորել ամենավատ վորակի խոտը, քանի վոր միշտ ել արտաքին մասում լեզած խոտը փշանում ե ու սեանում՝ ձմեռը—ձյունից և գարնանը—անձրևներից. այդ խոտը (դրսի մասինը) անասուններին չի կարելի տալ, վորովհետեւ դրանից կարող են հիվանդանալ։

Դեղերը պետք ե սարքել կոր, յեռանկյունի բուրդի նման կամ յերկարավուն, նայած տնտեսության մեջ լեզած խոտի քանակության. յեթե քիչ ե, պետք ե սարքել յեռանկյունի բուրգերով,

իսկ յեթե շատ ե՝ լերկարավուն։ Սովխողներն ու կոլխոզները պետք ե սարքեն մեծ լերկարավուն դեղեր, վորովհետև նա ավելի ձեռնտու լե, քանի վոր մեծ դեղերի արտաքին մասը համեմատաբար ավելի փոքր ե, քան թե փոքր դեղերինը, և այդ պատճառով մեծ դեղերից ավելի քիչ խոտ ե փշանում անձրեներից և ձյունից։ Քան փոքրերից։ Իսկ յեթե խոտը հավաքված ե անտառներից կամ լեռնալին մարգագետիններից, յերբեք չպետք ե մեծ դեղեր սարքեր, վորովհետև այդ պիսի խոտը կազմված ե լինում կարճ բոլ ունեցող բույսերից, և այդպիսի խոտերից կազմված մեծ դեղերը կարող են շատ հեշտությամբ քանդվել։

Խոտի դեղերը պետք ե գասավորել իրարից հեռու, վորպեսզի դեղերից մեկը հրդեհվելու (այրվելու) դեպքում՝ մյումներն ևս չայովեն։ Դեղերը մեկը մյուսից 3—4 մետր հեռավորության վրա պետք ե գանվեն այն դեպքում, յերբ խոտը գտնվում ե զյուղում և մոտավորապես մեկը մյուսից 10 մետր հեռու պետք ե լինեն այն ժամանակ, երբ խոտը գանվում ե զյուղից դուրս (կալերում կամ ուրիշ տեղ)։

Մեզ մոտ շատ տեղերում խոտը պահպաւմ է աների տանիքների վրա. պետք ե ասել, վոր այդպես պահելը լավ չե, վորովհետև նախ շատ

վտանգավոր ե այրվելու տեսակետից և յերկը ըրդն ել՝ խոտն սկսում ե շատ չորանալ, վորը փոշից վտանգում ե, և առաջանում խոտի փոշի, դա թափվում ե սենյակը կամ գոմը, և շատ վատ ե աղցում թե մարդկանց և թե անասունների առողջության վրա, առաջացնելով վորոշ հիվանդություններ։

Շատ տեղերում, վորտեղ ողը խոնավ ե, ձմեռը խոտը պետք ե պահել հատուկ ծածկերի տակ (սարայներում), մանավանդ այստեղ, վորտեղ խոտը քիչ ե և թանգ, անհրաժեշտ են ծածկոցներ, վորպեսզի ստացված քիչ քանակությամբ խոսից վոչինչ չկորչի։ Խոտի ծածկոցները կուրելի յե կառուցել միքանի տեսակ. նայած տընտեռության մեծությանը զրանք կարող են լինել այնպիսիներ, վորոնք ունեն միայն տանիք, իսկ մնացած կողմերը բաց են, և կարող են լինել այնպիսի ծածկոցներ, վորոնք ունեն վոչ միայն տանիք, այլև կողքի պատեր և աղն։

Խոտի պահելը հատուկ շինություններում շատ հարմար ե, վորովհետև այդ պայմաններում խոտն ավելի լավ ե պահվում և այն խոտը, վորը լավ չի չորացել, կարող ենք բերել և արդտեղ չորացնել. բացի այդ հարկավոր չեն վորակալար մարդիկ, վոր սարքեն (ինչպես առհասարակ հարկավոր են լինում դեղեր սարքող վորակալ բան-

վորներ), ալ ալդ աշխատանքները կարող են կատարել բոլորը՝ նաև կանայք և փոքրերը:

Բացի վերոհիշյալ յեղանակներից խոտը կարելի յե պահել մամլած (պրեսով խտացրած) վիճակում: Ընդհանուրապես պետք եւ մամլել խոտն այն ժամանակ, յերբ խոտի շատ լինելու հետեւ վանքով տեղ չի լինում բոլորը գասավորելու, կամ թե՝ յեթե ցանկանում ենք յերկար ժամանակ պահել՝ հեռու տեղեր փոխադրելու համար: Խոտը շատ յերկար ժամանակ չպետք եւ պահել. վորքան հին եւ խոտը, այնքան նա իր մեջ պարունակում եւ քիչ մննդաբար նյութեր: Այդ պահանոով այն խոտը, վորք մեկ տարուց ավելի յե պահվում, անցանկալի լե, յերբեմն ել զնասակար: Հին խոտն իր մեջ պարունակում եւ մեծ քանակությամբ խոտի փոշի, վորն, ինչպիս իմացանք, զնասակար եւ:


V. ԻՆՉՈՐԵ՞Ս ՎՈՐՈՇԵԼ ԽՈՏԻ ՎՈՐԱԿԵ

Խոտի վորակը վորոշելու համար ամենամեծ ուշադրությունը պետք է դարձնել նրա գուշնին, հոտին և թե ինչպիսի բույսերից ե կազմված արդ խոտը:

Լավ սեզախոտերից կազմված խոտը պետք է  
ունենա կանոչ գույն, յեթե նա հավաքված և  
լավ լեղանակին. ընդեղեններից՝ առվույտի գույնը

պետք ել լինի մուգ կանաչ, իսկ յերեքնուկինը՝  
գորշ կանաչ։ Ինչ վերաբերվում ե թթու մար-  
դաղետիններից ստացված խոտին, նրա գույնը  
միշտ լինում ե պսպղուն կանաչ։ Յեթե սեղերի  
խոտը դեղին գույնի յե կամ մուգ դեղնավուն,  
դա ցուց ե տալիս, վոր խոտը յերկար ե չօբաց-  
վել, այն ել անձրևոս լեզանակին։ Նույնպիսի  
պատճառներիցն ե ուրեմն ընդեղենների բուլսե-  
րից խոտը, յեթե նա ունի մուգ-գորշ գույն, մա-  
նավանդ յեթե նա շատ շուտ ե ջարդվում։ Լավ  
հավաքված խոտը պետք ե ունենա անուշ ու  
դուրեկան հոտ։ Թթու հոտ ունենում ե ճահճա-  
ցած սեղերից հավաքված խոտը կամ թե փշա-  
ցած խոտն ունենում ե բորբոսի հոտ։

Բացի այդ հատկություններից խոտի վորակի վորակի վորոշման ժամանակ ուշադրություն պետք է դարձնել նախ՝ այդ բույսերի հասակի, նրանց վրա յեղած տերևների և ծաղիկների բանակությանը (մանավանդ ընդեղեն բույսերին) և վերջապես՝ թե վորքան փոշի յե պարունակում իր մեջ։ Յեթե խոտի մեջ կան բավական քանակությամբ տերևներ ու ծաղիկներ, գա ցույց ետալիս, վոր խոտը ժամանակին և հավաքված՝ առանց շատ շուռ ու մուռ տալու։ Ուրեմն ինչքան խոտի մեջ շատ կան տերևներ ու ծաղիկներ, անքան այդ խոտը վորակով ավելի լավ է, և հակառակ՝ ինչքան քիչ են տերևներն ու ծաղիկները և շատ՝ խոտի փոշին, վատ և տվյալ խոտի վորակը։



ՑԱՆԿ

Եջ

Ներածություն	3
1. Ինչի՞ց ե կախված խոտի քանակն ու վո- րակը և լեռը պետք ե հնձել . . . . .	5
2. Ինչով և ի՞նչպես կատարել խոտհունձը . . . . .	10
3. Կանաչ խոտի չորացումը . . . . .	13
ի՞նչպես չորացնել խոտը չոր լեղանակ- ներին . . . . .	16
ի՞նչպես չորացնել խոտը անձրիոտ լեղա- նակներին . . . . .	19
4. Ի՞նչպես պահել չորացրած խոտը . . . . .	24
5. Ի՞նչպես վերոշել խոտի վորակը . . . . .	30

«Ազգային գրադարան»



NL0291818

ՑԱՆԿ

Եջ

Ներածություն . . . . .	3
1. Ինչից ե կախված խոտի քանակն ու վո- րակը և լեռը պետք ե հնձել . . . . .	5
2. Ինչով և ի՞նչպես կատարել խոտհունձը . . . . .	10
3. Կանաչ խոտի չորացումը . . . . .	13
Ի՞նչպես չորացնել խոտը չոր լեղանակ- ներին . . . . .	16
Ի՞նչպես չորացնել խոտը անձրիոտ լեղա- նակներին . . . . .	19
4. Ի՞նչպես պահել չորացրած խոտը . . . . .	24
5. Ի՞նչպես վորոշել խոտի վորակը . . . . .	30

ՀՀ Ազգային գրադարան



NL0291818

18889

## ԳԻՒԾ 5 ԿԱՊ. (1 Մ.)



Е. КАЗАРЯН

## СБОР СЕНА, ВЫСУШКА И СОХРАНЕНИЕ ЕГО

Госиздат ССР Армении  
Эривань 1931